ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի փետրվարի 11-ի թիվ 25-Ն հրամանը, սոցիալական համագործակցության իրականացման աշխատանքները համակարգելու նպատակով համակարգող խորհրդին անդամագրվելու համար տարածաշրջանի սոցիալական համագործակցության համաձայնագրին միացած սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները և ֆիզիկական անձինք մինչև ս/թ մարտի 12-ը ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի Ախուրյանի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (Ախուրյան համայնք, Գյումրիի խճուղի 42) ներկայացնեն մեկական ներկայացուցչի թեկնածություն:

Հայտագրման համար ներկայացվող նվազագույն պահանջներն են՝

- սոցիալական աջակցության բնագավառում գործունեության փորձ.
- սոցիալական ծառայությունների տրամադրման ծրագրերի իրականացում:

ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի

Ախուրյանի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն